աւետարանս, որ նորոգութիւնդ ես մեզ, տէր մեր և աստուած. և քեզ փառք. .»։

Ի վերջ Մատթէի աւետարանին, «Ով սուրբ Մատթէոս՝ բարեխաւսեա առ Քրիստոս աստուած վասն բազմամեղիս Թորոսի, և ծնողաց իմոց»։ և այլն։ Նոյնպէս և յաւարտ Մարկոսի և Ղուկայ աւետարանաց։ Ի ցովհաննէէ՝ շնաշեալ կնոջ պատմութիւնը գրուած է ի լուսանցսն, և ի ստորև ծանօթութիւնս «Զայս չնորհ տեսան սքանչելիաց Եւսերի ժամանակագրէ, թէ ի հերբայեցի աւետարանէ անտի ընկալաւ եկեղեցի. վասն այնորիկ և առընթեր պատշաճ համարեցաք կարգել ընթացից ցովհաննու աւետարանիս։ Զոր յիշատակէ յերրորդ դպրութեան Լթ գլխին բանիւ Պապիասի։ ցաւարտ աղերսին Եւթագի. «Ով սուրբ առաքեալք Պետրոս և Պաւղոս և ամենայն խումբք սուրբ առաքելոցդ. բարեխաւսեցէք առ տէր ցիսուս Քրիստոս աստուած մեր, վասն Գէորգեա վարդապետի որ զԳործքս գրեաց. և վասն բազմամեղիս Թորոսի և ծնողաց իմոց. .»։ — Պաւղոսի Թուղթն երրորդ առ Կորնթացիս գրուած է յետ սովորական ձևին «Գրեցի և կարգեցի» և այլն։ Յետ ցայտնութեան ցովհաննու. «Աստուածայայտնութեանն ժամակարգութիւն. այլ և բովանդակ տարւոյն ըստ ընթերցուածին, և ըստ այլ կարգացմանց»։ Իսկ պահարան Աստուածաշնչիս՝ միայն ի վերջն, երկաթագիր մեծ՝ մասն յաւետարանէն Ղուկայ։

ՇԷՔՍԲԻՐ ԵՒ ՊԱՔՈՆ

Նախընթաց ամսաթերթին մէջ ցուցուցինք՝ թէ բոլորովին անհիմն է Շէքսբրի անուամբ եղած թատերական խաղերն ընծայել Պաքոնի, և թէ իգնատիոս Ցոնէլլիի 'ի մէջ բերած պատճառքն բնաւին անզօր են։ Հիւսիսային Ամերիկայ Հանդէս լրագիրն Ուիլեըմ Ցօլֆի՝ որ Շէքսբրի նշանաւոր մեկնիչն է, յօդուած մը հրատարակեց, յորում նա Ցոնէլլիի ծածկագրութիւնը բոլորովին կը ջնջէ և կը հերքէ։

Ցոնէլլի իւր հաշիւներն հիմնած է 1623ին եղած տպագրութեան վրայ, զոր կը համարի թէ Պաքոն ըրած է։ Ի եթէ այս սխալ ըլլայ։ Ցոնէլլիի ամենայն հաշիւները անհիմն կը մնան։ Իսկայն Շէքսբրի գործոց վրայ ուսումն ընող անձինք կը հաստատեն՝ թէ այն Շէքսբրի թատերախաղուց տպագրութիւնն եղած է նորա մահուընէն եօթը տարի ետքը, իրեն երկու ընկերաց ձեռքով, որք ոչ կարող էին և ոչ ալ փորձ՝ այնպիսի գրականական գործոյ մը ձեռք զարնելու։ Իւրաքանչիւր ընթերցող կարող է քննել զայն կամ բընագրին և կամ անոր նմանահանութեան վրայ, զոր ամենուրեք ա-ժան կը վաճառեն։

Արդ կրնանք պնդել թէ բոլորովին յայտնի է և ամենեին անտարակոյս՝ որ այս տպագրութիւնս սրբագրուած չէ գրագէտ անձէ մը, որ տպագրութեան արուեստին սակաւ մի տեղեկութիւն ունենայ։ Ուստի ևս առաւել անըմբռնելի կ'ըլլայ ըսել՝ թէ փրանկիսկոս Պաքոն սրբագրեր է զայն կամ խնամք տարեր է անոր։

digitised by A.R.A.R.@

Տպագրութիւնն այն աստիճանի պակասաւոր է, որ գրեթէ քսան սը-խալ կայ իւրաքանչիւր իջին մէջ, և քանի հազար բովանդակ հատո-ցին մէջ։ Ցեղ տեղ այնչափ անճշդութիւնք կան՝ որ խաղացողաց ա-նուանքն չփոթուած և խառնուած են ասոնց ներկայացուցած ան-ձանց անուանց հետ. այսպէս օրինակ իմն, Երրորդ տեսլեան մէջ կ'ըսէ. «կը մտնեն իշխանն, Լէոնատոս, Եղոդիոս, և Եաք Վիլարն, մինչ-դեռ վերջինս զԲաղտասար ներկայացրնողն է։ Ա.յսպիսի վրիպակներ ուրիշ շատ տեղ կը գտնուին։

Խաղերէն ոմանք բաժնուած են 'ի Հանդէս և 'ի Ցեսիլ, իսկ այլք միայն 'ի Հանդէս, այլք ալ խառնակ կերպով առանց բաժանման տպագրեալ։

Գաղղիերէն, սպանեոլերէն և իտալերէն բառերու միջտ անճշդու-թիւն կայ, և երբեմն ծաղրելի վրիպակներ, օրինակ իմն. Ma foi, il fait fort chaud: je m'en vais à la cour – la grande affaire, գրած է, mai foy, il fait fort chaudo, se man voi a le court la grand affaires, և un garçon գրած է՝ oon garsoon: — Հէնրիկոս Եէ խա-ղին մէջ (Հանդէս Ե. Ցեսիլ Ե), O Seigneur! le jour est perdu, tout est | erdu! փոխուած են, O Signeur le iour et perdia, toute et perdie. Իսկ իտալերէն բառերն Capocchia եղած է chipochia, mercatante եղած է marcantant, — Venetia, Venetia, chi non ti vede non ti pretia, փոխուած է, Vemchie, Veneha, que non te vende, que non te perreche. —

Ցոնէլլի կը յաւելու թէ Պաքոն կը համարէր որ իւր «Թատերա-կան խաղերն իրեն անունը պիտի հռչակէին և պիտի չքեղացրնէին» քան թէ իմաստասիրական երկասիրութիւնքն, ուստի այս խաղուց հրատարակութեան մէջ մեծ ջանք և փոյթ ածնեցաւ։ Բայց ինչպէս կարելի է ըսել՝ թէ 1623ի 20,000 վրիպակօք տպագրութիւնն, հան-դերձ այսքան խոշոր անճշդութեամբքն, այնպիսի գիտնական անձի մը մեծ ջանից պտուղն և արդիւնքն ըլլայ։

Եւ եթէ Պաքոն չէր հրատարակող այս խաղուց, ըսել է թէ ինքն չէր կրնար յաւելուլ անոր վրայ ծածկագրութիւն։ Եւ վերջապէս՝ ե-թէ քննուի այս ծածկագրութիւնը, կը տեսնենք որ անկանոն դրու-թիւն մ'է, և շարունակ բառերը համբելու վրայ է, և այս դրու-թեամբ կարելի է բնագրին ամէն նախադասութիւնքը կազմել։

digitised by A.R.A.R.@